

ըէն շինուին Աօհօյի գործարանին նման
թէ շէնքին կողմանէ և թէ գործիքնե-
րուն . հրամանն առաւ ու յանձնեց Պօլ-
թընին :

Իրուսաց ու Հանիմազքայի տէրու-
թիւնները յանձնեցին Պօլթընին մէյ-
մէկ հատ աս գործիքներէն : Որուսաս-
տանի համար շինած շոգեգործիքով՝ ու-
թը ուրիշ ստակ կոխելու գործիք կը
շարժէր , ու մէկ վայրկենի մէջ ամէն
մէկ գործիքը քառասուն կտոր ստակ կը
կոխէին , և կառավարողն էր տասուեր-
կու տարեկան պղտի տղայ մը : Որուսաց
կայսրը Պօղոս իր ձեռքովը շնորհակա-
լութեան ու գովեստի թուղթ մը զրեց
Պօլթընին : Եմոնցմէ զատ Պոմնայի
ու Ալկադայի ընկերութեանց համար
ալ շինեց մէյմէկ հատ աս գործիքներէս :
Ալկադայի գործարանին ունեցած գոր-
ծիքներուն նման մեծ գործիք ունեցող
գործարան չկայ կ'ըսեն աշխարհիս վրայ :
Եմէնքն ալ Աօհօյի գործարանը շինուե-
ցան , ու ետքը Ալկադա իր Ատ-
թէոս Որովինսըն Պօլթըն որդիէն 'ի
գործ դրուեցան :

Ե՛ռաւ Պօլթըն ու թսունումէկ տա-
րեկան , և թաղուեցաւ Ա օնտսվօրթի
եկեղեցին . մեծագործ ու գեղեցիկ տա-
պան մը շինած է գերեզմանին վրան
երեւլի անգղիացի Վլաքսմէն արձանա-
գործէն , որ Աօհօ սորված էր իր ար-
հեստը :

**

Սոկրատէս նախատեալ լինէր թէ 'ի հարց անե-
րեանից իցես . և նա ասէ . Այդ է իմ գովութիւն ,
զի յինէն սկսանի ազգ իմ :

Թէսափիդէս տու . Ի քաջազդութիւն մի ոք պար-
ծեցի , զի մի կաւ ունին ամենեքեան 'ի նախնեաց ,
որք 'ի ծիրանիս իցեն և որք 'ի խոր աղքատութեան
մահացք էն :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ԱԾԽԱՄՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Խրէնիս Հրայի եղած զանազան բնահան գո-
տունութիւնները :

Դ . Անապատ Երէիբներ պաղաբեր Եղեր էն ,
և 'ի բնէ պաղաբեր Երէիբներ անապատացեր
էն : — Սինք առաջ ալ թէ ինչ է անա-
պատը : Խակ Ճաշիճ ներն ցամքեցընելու-
համար ջրանցներ կրնան շինուիլ , ինչ-
պէս որ հողանտացիք ըրին . Ժայռերու-
վրայ և քարոտ տեղուանք կրնայ հող տա-
րուիլ , որպէս զի որթ , ընդեղէն և ծա-
ռեր անկուին , այսպէս ըրին Պաղեստի-
նոյ մէջ հին Հրեայք , Ո ալզացիք՝ Կոծ-
ծոյ կղզւոյն մէջ , Օ ուիցերացիք ալլե-
ռան մը վրայ որ Ո ոզաննայի և Ա եւայի
մէջ տեղերը կ'իյնայ : Խակ աւազուտ ա-
նապատներու համար կրնայ ջուր բե-
րուիլ ջրանցներ փորելով , ինչպէս որ ը-
րին հին Ագիպտացիք և Պաղպէացիք
իրենց երկիրներուն մէջ , Ո արբացիք՝
Ապանիոյ մէջ : Ո արդիկ այս ամէն բա-
նը կրնան ընել . բայց թէ որ անհոգ ըլ-
լան , շինած ջրանցքնին ալ ջուրը բռնե-
լու համար թումբերն ալ կ'աւրուին ,
անձրեններն ալ ժայռերէն կը քշեն կը
տանին իրենց վրայ բերուած հողը . ահա
այսպէս եղան Ագիպտոսի , Պաղպէա-
ստանի , Պաղեստինոյ մէջ , և Ապանիոյ
քանի մը կողմերը :

Լյրեեմն ալ երկրի մը աւրուիլը կամ
գէնալը բնական կերպով կը պատահի :
Վանի քանի զեղեցիկ երկիրներ չաւ-
րեց Ա եսուվին լաւան , և ամենէն աւե-
լլ հեքլա Խալանտիոյ զարհուրելի հրա-
բուխը , որ կը թափէ իր լաւան բոլոր
երկրին ահազին տարածութեանը վրայ :
Յայտնի է որ այսպիսի կարգէ դուրս
մնաներու դէմն առնելը մարդուս ձեռ-
քը չէ :

Ե. Օ անաղան գաւառուաց հողը այլ և այլ ծամանակ շանաղան պէսակ բորսէր բուսուացէր է. և ասոնք ալ մարդկանց պէս, երիբէ երիբ անցէր են : — Իմէն բոյս պէտք է որ իրեն աձելու բնիկ տեղ մը ունեցած ըլլայ : Ը ատ բոյսեր կրնան նոյնապէս աձիլ զանազան գաւառուաց մէջ, թէ որ այն գաւառներուն հողը և կիման յարմարի իրենց, ինչպէս իրենց բնիկ գաւառին . բայց ամենենին իրենք իրենցմէ չեն աձիր . պէտք է որ կամ զիապուած մը և կամ մարդս փոխազրէ զանոնք :

Արթը ամէն ատեն կրնար ինչպէս հիմայ աձիլ Կաղղից մէջ ալ Կերմանիոյ մէջ ալ . բայց միայն երկու հազար իրեք հարիւր տարիէն քիչ աւելի է, որ առջի որթը բերուեցաւ Փոքր Աստիայէն Արտախիսա : Ատերայի կղզին, որ այս պէս հռչակուած է մեր օրերը իր ընտիր գինուոյն համար, հազար տարի չկայ որ իսիտ անտառ մ'էր . Փորթուգէչները կրակի տուին զայն, և անոր մոխրին մէջ մշակեցին որթը, ուսկից որ բոլոր գետինը ծածկուեցաւ Արետի որթով : Արթին մշակութիւնը Աարեյուսոյ գլուխը և Աղլայի եղերը աւելի նոր է :

Բայց ատեն մը եղաւ որ ամենենին որթը չէր աձեր Կերմանիոյ մէջ . ուրիշ ատեն մ'ալ՝ որ ոչ հաճար կ'աձեր, ոչ ցորեն, ոչ փալից թուփեր, ոչ ծնեբեկ, ոչ ծխախոտ, ոչ գետնախնձոր, որոնք բոլորն ալ Աստիայէն և Ամերիկայէն բերուած բոյսեր են : Այն հողը այն ատեն ուրիշ բան չէր բուսցներ, բայց եթէ խոտ, ելակ, վայրի խնձոր և ծառեր, ինչպէս որ կ'աձին նաև անտառներու մէջ : Կրինձը և շաքարի եղեգը ատեն մը միայն արևելեան Հնդկաց մէջ կը գտնուեր, ուսկից որ այս երկու բոյսերը անցան Ագիպոտոս, և անկից Խտախա և Ապանիա : Հիմա այս բոյսերը ուրիշ տեղ այնչափ պարարտ չեն, որչափ որ Արտօլինայի և Անտիլեան կղզեաց մէջ : Այսօր կը տեսնուին Ապանիոյ և Փորթուգալի մէջ ամբողջ անտառներ լեցուն Այնու խնձոր բերող ծառերով, բայց երկու հարիւր տարի

առաջ ասոնցմէ և ոչ մէկ հատ մը կար բոլոր Աւրոպիոյ մէջ :

Զ. Աւետանիք ալ, մարդկանց պէս, երիբէ երիբ անցէր են : — Ավ հանդիպի նաև կենդանեաց այն բանը, ինչ որ բուսոց համար ըսինք, վասն զի թէպէտ և ասոնք քալելով կամ լողալով իրենք իրենցմէ կրնան փոխազրուիլ շատ անզամք երկրէ մը ուրիշ երկիր, զորն որ բոյսերը չեն կրնար ընել, սակայն շատ անգամալ զիրենք բերողը մարդիկ են : Ավ կարծուի թէ ամէն ատեն Աւրոպիոյ մէջ մուկ կար, բայց այս իրաւ է որ Ամերիկայի մէջ և Համբարձման կղզւոյն մէջ չկար : — Այս երկու երկիրներուն մէջ դիպուածը տանել տուաւ զմուկը Աւրոպացի նաւերով :

Պէտք է որ տեղ տեղ ձիանք ինքնիրեննուն թափառած ըլլան վայրենի վիշակի մէջ, բայց հաւանական է որ մարդիկ մտուցին զանոնք Կերմանիոյ և Ապանիոյ մէջ : Ապանիացիք առջինը եղան որ Ամերիկա ծի տարին, վասն զի իրեք հարիւր տարի առաջ Ամերիկայի մէջ և ոչ մէկ հատ մը կար :

Դնդղիան Ապանիայէն առաւ իր ընտիր ոչխարները, Ապանիան ալ Ամերիկէն : Ուէ որ Աւրոպան իրեն հարաւային կողմերուն մէջ մետաքսի հարըտութիւն ունի, պէտք է շնորհակալ ըլլայ այն երկու կրօնաւորաց որ Աստիային խորերէն բերին շերամի հակիմը :

Արբոր երկրի մը մէջ առատապէս օտար տունկեր մշակուին, հիները որ հոն կ'աձին, կը սկսին պակսիլ և բոլորովին կը կորսուին : Ուեր դաշտերուն մէջ, ուր որ հիմա ծխախոտ կամ հաճար կը ցանուի, ուրիշ տեսակ խոտ չաձիր : Ատերա կղզւոյն մէջ, ուր որ այսօր որթի կոճեր տնկուած են, ամենենին վայրի ծառ չի բուսնիր :

Այն կերպով երբոր օտար մարդիկ և կենդանիք կու գան երկիր մը՝ հոն տեղի վայրենի կենդանիք կամաց կամաց կը կորսուին . որովհետեւ ասոնք վնաս կ'ընեն նորեկներուն՝ մարդիկ ալ կը ջըն ջեն զանոնք : Ը ատ անգամ նաև ինքն

իրեն ալ կ'երթան, երբոր կործանուխն այն անտառները՝ որոնց մէջ որ իրենք կը քնակէին, կամ երբոր ցուրտի վարժած չըլլալով, կը նային որ չեն կրնար ապրիլ երկիր մը, որ իրենց համար տաք է:

Ի՞նգդիոյ մէջ հիմայ ամենեին արջ չկայ. բայց հազար եօթը հարիւր տարի առաջ կը տեսնուէր Հռոմայ փողոցներուն մէջ Իշխտանիոյ արջուն խաղալը, ինչպէս հիմա ամէն որ կը տեսնուի Դերմանիոյ քաղաքաց հրապարակներուն և փողոցներուն մէջ՝ Եհաստանի արջերուն խաղալը։ Ի՞նգդիոյ մէջ ջրն ջռւած է նաև գայլերուն ցեղը քանի որ այն երկիրը ոչխարներ ունեցաւ։ Եւ ասոր պատճառն է որ գայլերը ոչխարներու թշնամի են, և Ի՞նգդիացիք աւելի օգուտ կը գտնան ոչխարներով քան թէ գայլերով, անոր համար ալ ջնջած են այս կենդանիքը։

Չ ատ ժամանակ չէ որ Դերմանիոյ և Հոլանտայի մէջ Մտորին Հռենոսին կողմերը կը թափառէին Պիզոն ըսուած վայրի ցուլերը, Իէն եղջերուն, և լալանը. այսօր հօն այս տեսակ կենդանիներէն և ոչ մէկ հատ կը գտնուի։ Ավ կարծուի որ այն երկիրներուն կիման իրենց համար վերջերը շատ տաք եկած է, անոր համար Ի իդուանիայի ձամբան բռնելով դէպ ՚ի լափնիա քաշուեր են։

Վանի որ մարդկանց թիւը երկրի մը մէջ կը շատնայ, հօն վայրի կենդանեացը կը պակսի, և քանի որ այս կենդանեաց թիւը շատնայ, մարդկանցը կը պակսի։ Մտեն մը Խտալիա սակաւամարդ է եղեր, այսինքն ասկէ հազար տարի առաջ. այն ատեն գայլերը այն չափ շատցեր են որ մարդ չի կրնար եղեր ապահով ձամբորդութիւն լնել։ Չ ատ տարի չէ որ Դերմանիոյ մէջ դեռ կը տեսնուէին մեծամեծ պարոններ որսորդութիւն սիրող, որոնց աւելի քաղցր էր վայրի կենդանեաց միաը քան իրենց հպատակաց հոգը։ Ի՞նոր համար ասոնք ալ թողուցին գացին բնակելու Ռենսիլ վանիոյ մէջ։

Է. Օ անազան գաւառանէր, որ առէն նը յուարդ էին՝ բաժցեր են, և բաքէրը պաղէր են։ — Ուր որ շատ անտառներ կան՝ երկիրը խոնաւ կ'ըլլայ, վասն զի արևուն ձառագայթները որ երկիրը պիտի չորցրնէին, չեն կրնար թափանցել պատճառաւ խիտ ծառերուն։ Ուստի ուր որ երկիրը միշտ խոնաւ է, ան երկրին օդն ալ խոնաւ կ'ըլլայ, ցուրտ, ամակամած, պատճառաւ շոգիին որ միշտ կը բարձրանայ, ինչպէս որ կը պատահի, օրինակի համար, Ամերիկայի Կոր երկիրը ըսուած կղզոյն մէջ։ Ի՞նյայց երբոր այն մեծ անտառները արմատէն խլուին, արեւ կրնայ զարնել իր ձառագայթները ազատաբար երկրիս վրայ, և անով երկիրը կը չըրնայ, և շոգին կը դադրի, անով օգը կը տաքնայ, երկինքը կը պայծառանայ և ամառը երկայն կ'ըլլայ։ Ի՞նով գետերն ալ չեն սառիր, կամ գոնեն այնպէս շուտ և երկայն ատեն չեն սառիր, ինչպէս որ առաջ կ'ըլլային։

Խտալիոյ մէջ Ա իրգիլիոսի ատեն զինին տակառներուն մէջ կը սառիր, և Հռոմայեցիք Տիբերիս գետին սառելուն տեսարանը կը վայելէին։ Հիմայ ոչ Տիբերիսը կը սառի Հռոմայ մէջ, ոչ ալ զինին տակառներուն մէջ, թէ որ մասնաւոր տեղ մը դրուած՝ կամ նոր տեսակ խառնուրդ մը եղած չըլլայ հետը։ Դերմանիան հազար վեց հարիւր տարի է որ ցուրտ խոնաւ և սոսկալի երինչպէս Ախակերիան, վասն զի լնդարձակ անտառ մըն էր. Վանատան ալ երկու հարիւր տարի առաջ ուրիշ Ախակերիա մըն էր։ Հիմա Դերմանիան լի է քաղաքներով և գեղերով, բոլոր երկիրը մշակած և երկինքը պայծառ, ու Վանատային կիման տարուէ տարի կը քաղցրանայ, քանի որ Վաղղիացիք և Ի՞նգդիացիք սկսան քիցընել այն ահազին անտառները, որ երկիրը կը ծածկէին։

Ի՞նյայց թէ որ երկրի մը մարդկիկը պակսին, անտառները նորէն կը կանգնուին, և այսպէս երկիրը նորէն խոնաւ և ցուրտ կ'ըլլայ, երկինքը ամառամած և տիսուր, վայրենի կենդանիք նորէն կը շատնան։ Վայրէնի կենդանիք նորէն կը շատնան։

որ ատեն մը շատ գեղեցիկ էր, հիմա
մէջը փայտի ծառեր կ'ածին որ լշգիպ-
տոս կը փոխազդուին, որ հին Յունաց
ժամանակը չկար, երբոր Հռոդոս լի էր
բնակչօք, որոնք իրենք զիրենք տուած
էին վաճառականութեան, արհեստնե-
րու և ուսմանց :

Ա . Ի՞նառողջ երէեներ առողջարար ե-
ղած էն, և գոխարտաց : — Բայրոր Ճախ-
նային երկիրները վատառողջ կ'ըլլան
իրենց վնասակար գոլորշեացը համար,
անոր համար երբոր ակօններ բացուին,
գետինը կը չորնայ և վնասակար գոլոր-
շիքները կը դադրին : Իմէն երկիր, զոր
ընդարձակ անտառները կը խոնաւցը-
նեն, չոր երկիրներէն աւելի անտողջ
կ'ըլլայ :

Ի վերայ այսր ամենայնի կը հանգի-
պի որ երբեմն անտառ մը կը պահէ եր-
կիր մը ուրիշ երկրի մը վնասակար գո-
լորշիքներէն . և երբոր այսպիսի անտառ
մը կտրուի, առջի երկիրը կը կորսնցընէ
իր պահպանիք, և վնասակար երկիր մը
կը դառնայ : Իյս պատճառաւաւ Պոն-
տինեան Ճահճիճներուն անտառները
կտրելը Հռոմայ մեծ վնաս ըրաւ :

Ամբարտաւան մարդիկ ուսմունքը կ'արհամար-
հեն, միամիտները անոնց վրայ կը զարմանան, ին-
լացիները անոնցմբ օդուա կը քաղեն :

Գրքերէն ոմանք պէտք է պարզ ճաշակել, ո-
մանք լափել, քիչ գիրք ալ կայ որ պէտք է մար-
սել :

Պատմութիւնը զմարդու ուղղագատ կ'ընէ, բա-
նասաեղծութիւնը՝ վառվըռուն, շափական գի-
տութիւնները՝ նրբամիտ, իմաստափրութիւնը՝
խորունկ մոսածող, բարոյականը՝ ծանր, տրամա-
բանութիւնը՝ հակառառող :

Մէկն որ Ճշմարիտ բարեկամ մ'ունի՝ մի և նոյն
ժամանակը կրկին կեանք ունի :

Մեծամեծ գործովութեանց սկսուածքը պէտք
է Արքոսի յանձնել որ հարիւր աք ունի, վախ-
չանն ալ Պրիարիոսի՝ որ հարիւր ձեռք ունի :

ՊԱՐՈՒ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ի ասուլիսէն կամ Պրէայիկ օչ :

“ Որպէս որ բասիլիսկոսն կոցի-
ազդ ինչ օձից, հայելով միայն
սատակէ զմարդ կամ զանա-
սուն, ուստի յորժամ՝ ի ջրհօրս
գտանիցի, ձրագ առեալիթա-
նեն՝ ի ներքս ըմբռնելզի հայե-
ցեալ ընդ ձրագն ոչ մեղանչի.
ցէ մարդոյն օձն, : Եվիչի :
“ Թագաւոր իժ՝ արքոսիկ օձն է.
ասեն թուշուն է, և աչօք ևս
ոպանանէ, : Վարդակ. Ս-ւ :

ՀԻՆԵՐԸ այս կենդանւոյս վրայ այն
պիսի հրաշալիքներ կը պատմեն որ մարդ
կը զարմանայ թէ ինչպէս խելացի մար-
դիկ ալ այն աստիճանի ցնորական ա-
ռասպելներու հաւատք ընծայեր են :

Ի սիկայ իրեք տեսակ է եղեր . մէկ
տեսակը ինչ բանի որ կը մօտենայ կ'այ-
րէ կը մրկէ եղեր . և ուսկից որ անցնի
անապատ կը դարձընէ եղեր . վասն զի
կենդանիք, բոյսք, ամէն բան անոր առ-
ջև մոխիր կը դառնան եղեր :

Երկրորդ տեսակը ինչ բանի որ նայի
մէկէն կը թունաւորէ եղեր . վասն զի
ացքերէն թունալից Ճառագայթներ ար-
ձակելով զիմացի առարկան մարդ, ա-
նասուն՝ կեցած տեղը մոխիր կը դար-
ձընէ եղեր :

Երրորդ տեսակն ալ միայն շօշափ-
մամբ կենդանեաց մարմինը ոսկորներէն
կը բաժնէ եղեր : Չորրորդ տեսակ մըն
ալ կը յիշատակուի որ ասոնց ամենուն
մահացուցիչ զօրութիւնը միանդամայն
ունի եղեր : — Իսայց թէ որ բասիլիս-
կոսի տեսքը միայն այսպիսի մահացու
զօրութիւն ունէր, ով և ինչպէս կրցեր
են զինքը զիտել ու ստորագրել :

Ի յսպիսի հրաշալի կենդանւոյ մը
ծագումն ու ձեւն ալ հարկաւ պէտք էր
որ կարգէ դուրս ըլլար . և իրագ կը պատ-
մեն թէ երբոր աքաղաղը զառամութեն
հասակը կը հասնի հաւկիթ մը կ'ածէ,

1 Յն . Բատլիսկ Վասիլիքն արքայի .
Լո . Basiliscus կամ Regulus. Մէր մէջ կ'ըսուի
նաև Օֆբայի, Աբայի, Թագաւորական օչ :